ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Կնոջ հոգեբանության բացահայտումը Գրիգոր Զոհրապի նորավեպերում»

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ցողիկ Կարապետյան

ԽՈՒՄԲ՝ Հայոց լեզու և գրականություն

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

2022 թ.
Եղեգնաձոր

Կնոջ հոգեբանության բացահայտումը Գրիգոր Զոհրապի նորավեպերում

Առաջաբան

«Նորավեպի իշխան» Գ. Զոհրապը, լինելով ժամանակի մեծ մտածող ու վերլուծաբան, իր նորավեպերում անդրադարձել է կնոջ կերպարին։

Միշտ էլ հայ կինը եղել է հասարակության ամենածանր բեռը իր նուրբ ու ամուր ուսերին կրող էակը, որն իր ընտանիքի ամրության, կայունության և երեխաների երջանկության համար պատրաստ է զոհաբերել ամենանվիրական զգացմունքը, երազանքները, հաճախ նաև հասարակական ու աշխատանքային վերելքը։

Հայ գրականության էջերում հանդիպում ենք հերոսական, հայրենապաշտ, ազգասեր, անձնազոհ, որդիասեր ու հավատարիմ կանանց կերպարների։ Հայ գրականության մեջ հայ կնոջ բացասական կերպարները շատ քիչ են։ Կյանքում էլ հայ կինը միշտ եղել ու մնում է բարոյականության խորհրդանիշ։ Այդ կինն է դաստիարակում իր որդիներին, որ դառնում են հզոր ու առնական տղամարդիկ։

Զոհրապի նորավեպերի կանանց հոգեբանության շատ բացահայտումներ այսօր էլ են արդիական՝ ինչպես նրա ժամանակ։ Այսօր էլ կարելի է տեսնել «այրիների», «փոստալների», «թեֆարիկների» և այլն։ 21-րդ դարում էլ ենք պայքարում կանանց իրավունքների ոտնահարման ու անհավասարության դեմ։ Ճիշտ է, Զոհրապը երբեք չի ընդունել սեռերի հավասարությունը, սակայն նրա նորավեպերում զգացվում են հեղինակի նուրբ վերաբերմունքն ու կարեկցանքը անպաշտպան կանանց նկատմամբ։

Զոհրապի հուսահատ հերոսուհիներից ոմանք փորձում են փրկություն գտնել եկեղեցում, հավատքի ու աղոթքի միջոցով փարատել հոգեկան խռովքը։ Այսօր այդպիսի հուսահատ կանայք հաճախ հայտնվում են որևէ աղանդում, որն էլ իր ձևով ու օրենքներով է «փրկում» այդ մոլորյալներին։

Պանդխտությունը միշտ չարիք է եղել աշխարհով մեկ սփռված հայ տղամարդկանց, ինչպես նաև նրանց կարոտով ու հավատարմորեն սպասող, ընտանիքի հոգսերով ծանրաբեռնված կանանց համար։ Զոհրապը քննադատաբար է նայում այդ խնդրին և կարեկցում է կանանց։

Եթե Զոհրապի հերոսուհիները լուռ ցավերից ավելի են խեղճացել ու ընկճվել, այսօր հայ կինը հաճախ չի ներում ամուսնու դավաճանությունը, ինչը դառնում է ընտանիքի քայքայման ևս մի պատճառ։

Նորավեպերի հերոսուհիները՝ սոցիալական ծանր վիճակում հայտնված մանկամարդ օրիորդները, կապվում են հարուստ տղամարդկանց հետ,

վաճառում իրենց երիտասարդությունը, անմեղությունը, ապագան, երազանքները, հայտնվում կյանքի հատակում կամ զրկվում կյանքից։

Նույն անելանելի իրավիճակում այսօր էլ են հայտնվում կանայք, այսօր էլ են դժբախտանում, այսօր էլ են ինքնասպանություններ գործում…

«Կանացի հոգեբանությունը իմ մեծագույն զվարճալիքս է»

Գ. Զոհրապի նորավեպերի կերպարների զգալի մասը կանայք են՝ ամեն դասից և խավից: Դրանցով, անտարակույս, նա մեծ նորություն է բերել մեր գրականության մեջ, հարստացրել է մեր գրականության կին կերպարների պատկերասրահը: Կանանց կերպարների միջոցով հեղինակը լուսաբանում է ժամանակի կյանքի ճահճացումը, բարքերի անկումը, բուրժուական հասարակության բարոյական և մտավոր խղճուկությունը, աշխատավոր կնոջ դառը վիճակը, լուսաբանում է այն ծանր դրությունը, որի մեջ ամեն մեկը յուրովի դժբախտ էր. աշխատավոր կինը տառապում էր աղքատության ճիրաններում, ոտնահարվում են նրա մարդկային տարրական իրավունքները, իսկ վերնախավի կինը՝ զուրկ ինքնուրույնությունից, բռնադատված սահմանափակ դերի համար, մեծ մասամբ դժբախտ՝ սառը հաշվի վրա հիմնված անհամապատասխան ամուսնության, զգում էր անբավարարվածություն այդ դրության մեջ, որից ամեն մեկը ջանում էր յուրատեսակ ելք գտնել՝ մեկն իր գեղեցկությունը չկորցրած մեռնելու մեջ, մյուսը կառչում էր հավատքին, մի ուրիշը ձյան պես փռվում «անցորդի» գարշապարի տակ, ոմանք լռեցնում էին իրենց սրտի ձայնը և հոգեպես տառապում, շատերը կերակրվում էին բամբասանքներով և այլն:

«Կանացի հոգեբանությունը,– գրում է Զոհրապը,– իմ մեծագույն զվարճալիքս է, անծանոթ, անմատչելի բեւեռն է ան, որ Հյուսիսինեն ալ ավելի համառությամբ կը պահե իր թաքուն հրաշալիքները... կնոջական հոգվույն ամեն առեղծվածները լուծողի հովեր կառնեմ»[1]: Ապա հավելում է. «Կիները գիտեն, որ կը սիրեմ իրենց հոգեկան հարցերովը զբաղվիլ, այդ խուլ պայքարներուն պատմագիրը ըլլալ: Մանավանդ որ իմ մեծ ներողամտությունս իրենց մեղանչումներուն համար տեսակ մը հրավեր է խոսելու»[2]:

Վերջապես, ըստ Զոհրապի, ընտանիքում կնոջ գրաված դիրքը պայմանավորված է նրա մայրական գործառույթներով, որոնք որոշվում են կենսաբանորեն եւ կախված չեն սոցիալական պայմաններից: Ավելին՝ միանգամայն սխալ է կնոջ ազատությունը առնչել տղամարդու բռնությանը: Նրա վիճակն ընտանիքում բխում է «կնային բնությունից», եւ եթե պետք է խոսել անհավասար իրավունքի մասին, ապա դա վերաբերում է այրերին, որոնց հատկացված է չարչարանք. տքնություն, հոգնություն եւ աշխատություն, մինչդեռ կինը սովոր է միայն վայելել այն քրտինքի արդյունքը, որուն բնավ չի մասնակցած... կինը օտարական է բոլորովին քաղաքակրթության այն հսկա շենքին, որ այր մարդը իր արյունով, իր քրտինքովը կառուցած է»[3], կինը

մարդկության պատմության ողջ ընթացքում իր բաժինը չունի ո՛չ գիտության հանճարեղ գյուտերի, ո՛չ բնության վերափոխման արարչագործ աշխատանքի եւ ո՛չ ազգերի ու պետությունների կազմավորման ասպարեզներում: Անհավասարությունը սեռերի միջեւ սահմանված է բնությամբ. տղամարդը ուժեղ է ոչ միայն ֆիզիկապես, այլեւ իր մտավոր կարողությամբ, կամքի ուժով եւ «կը հետեւի ուրեմն որ կիներու կացությունը բնության եւ գոյության պայմաններու հետեւությունն է եւ ոչ այրերու բռնության արդյունք, որոնք ի բնե սահմանյալ են աշխատության եւ իշխանության. իսկ կինը ամուսին եւ մայր լինելե անդին չունի գերմարդկային կյանքին մեջ, իր գոյությունը այդ երկու պաշտոններով միայն կարդարանա»: Հետեւաբար «կնոջ բոլոր ընկերական կյանքը առ յուր ամուսինն հավատարմության խոստման գործադրության մեջ կը կայանա, եւ այդ ուխտին դրժիլը իր մեծագույն ոճիրն է»[4]:

Զոհրապի նկարագրած կանայք արտակարգ հմայք ունեն եւ սքանչելի են կանացի իրենց կեցվածքի մեջ, անտրոհելի ամբողջություն՝ իրենց հմայքի ու անգամ «հոռի կողմերի» ազատությամբ, քանզի «կանացի գոյությունը այնպիսի ամբողջություն մըն է, որուն մեկ քարը խախտելու չգար»: Զոհրապ գեղագետն իրեն համարում է կանանց հոգեկան ներքին «խուլ պայքարներուն պատմագիրը» եւ սահմանում իր ոճի առանձնահատկությունը. «Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն. բայց մանր դեպքերը լուրջ խորհրդածություններու նյութ են ինծի: Դասերը, որ կը քաղեմ անոնցմե վրդովիչ՝ պայմանադրական կարգ ու սարքի կուսակիցներուն՝ թանկագին են ինծի համար: Անոնք կուգան հաստատել այն բարոյականը, որ իմս է, ճիշտ ներհակը եւ գլխավորը հանրության մեջ ընդունվածին»[5]: Սա սկզբունքային դիտարկում է: Զոհրապի նովելներում իրոք չկան մեծ պատահարներ, մեծ գործողության հերոսներ, այլ «մանր» դեպքեր, հոգու լուռ ողբերգություններ, որոնք չունեն արձագանք եւ լսելի են միայն «խղճմտանքի ձայներ»: Նա իրա-կանությանը նայում է իր իդեալների բարձունքից, սովորեցնում փնտրել «մեծություններ» եւ «գեղեցկություններ»՝ սահմանելով իր գեղագիտական բանաձեւը. «Կը հետեւեցնեմ թե Մարդոց եւ Իրերուն վերեն նայելու է միշտ լայն, ազատ, մաքուր նայվածքով, որպեսզի ամեն ինչ ընդգրկես անոր մեջ. ոչ թե անձուկ եւ հաջաղկոտ ակնարկով մը որուն պզտիկությունները ու տգեղությունները միայն կը տեսնես միշտ, իսկ մեծություններն ու գեղեցկությունները՝ երբե՛ք»[6]:

Նա իր նովելները հրատարակել է երեք շարքով՝ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է», «Լուռ ցավեր», որոնցից յուրաքանչյուրն ունի գե-ղագիտական ներքին միասնություն: Եվ որպես ընդհանուր մոտիվ՝ ընդգծվում է կինը՝ հոգեբանական ամենատարբեր լուծումներով՝ համակերպված իր

ճակատագրի տրվածքին: Կինը կյանքի ժպիտն է, որ մարդկային հոգու, գեղեցիկի եւ բանաստեղծության պահանջը տեսանելի առարկայի վրա բավարարելու հնարավորություն է ընձեռում: Կնոջ ամենաթանկագին հատկությունը գեղեցկությունն է. «Կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի»: Եվ Զոհրապի նկարագրած կանայք գեղեցիկ են. «նրբացողուն ծաղիկի» պես դյուրաթեք, ճկուն, սլացիկ իրաններով, նրանք «թաքուն կայծակներով» լի եղնիկի աչքեր ունեն, որոնց մեջ «թոնուտ երկինքի մը կապույտը կար»[7]: Զոհրապը հետեւում է կյանքի անողոք ընթացքին, որն ուրույն կնիք է դնում կնոջ հոգեբանության վրա: Մենք կրկին դառնում ենք նրա կենսափիլիսոփայությանը՝ երջանկության մասին. իրար են խառնվում սերն ու կսկիծը, պատրանքն ու իրականությունը՝ հնչեցնելով սիրո եւ ցավի հավերժական մեղեդին: Հույսի եւ սպասման մեջ էլ կինը դժբախտ է. նրա համար չկա երջանկություն նույնիսկ երազների մեջ:

Նրբագեղ գրավչության մի պատկեր է «Էտլվայսը» էսեն. այլ ծաղիկները, որոնք ալպյան այդ անթառամ ծաղկի նման մշտական չեն, անցնում են գնում «վաղամեռիկ հրապույրներուն սուգը ձգելով, էտլվայսը միայն իր անանց մանկության մեջ է հավիտյան: Այսպես եւ կնոջ գեղեցկությունն է՝ իր փթթումով, ծաղկունքով եւ անկռահելի դիպվածների վրիպումով անվերադարձ թառամումը: Վիշիում գետին ընկնող կարմիր ու դեղին տերեւները ծնում են ուրիշ իմաստասիրական խորհրդածություն եւ մտորում. «Շատ մըն ալ կարմրած դեղնած տերեւներ գետին ինկան. ե՞րբ դեղնեցաք կանաչ տերեւներ, քամիին փչելու հետ աշունը հայտնվեցավ հանկարծ, մինչդեռ մենք ամառվան մեջ կը կարծեինք ինքզինքնիս. այն կիներուն պես որոնց թաքուն վիշտ մը՝ մազերը կը ճերմկցնե ակնթարթորեն. ակնարկ մը հայելիին. երիտասարդությունը ձգեր փախչեր է ահա»[8]: Օսթանդում բեհեզի, շղարշի, ժանյակի կամ «մութ կերպասներու» մեջ պարուրված ամեն տարիքի ու հասակի, ալեհեր ու «շինծու կազդուրումով» կանայք անգամ անտարբեր չեն թողնում գրողին, եւ նա անկեղծաբար խոստովանում է. «Ես կը սիրեմ աշունը կիներուն. շիջելափառ արեւմուտքը որուն անգիտակից խորհրդանշանն է եւ որ իրապես Կյանքը կը ներկայացնե իր աննահանջելի վերջավորությանը մեջ»[9]: Այլ խորհրդածություններ է ծնում փարիզուհին. «Ամեն տեղ կը հանդիպիս խնդամոլ, պչրոտ եւ մոգիչ էակին, որ կին կը կոչվի... ուզես թե ոչ՝ անոր առեղծվածային եւ շլացուցիչ շավղին կը հետեւիս, անոր հմայքը կ՚զգաս հոգվույդ մեջ, այնքան Բարիզեցի կինը գիտե կյանքը զարդարել, լուսավորել, շենցնել»[10]: «Մամայիդ բարեւ ըրե» նորավեպի մեջ նուրբ, լուսավոր քնարականությամբ պատկերելով իր աշակերտական տարիների տպավորություններից մի դրվագ՝ հեղինակը նկարագրում է եղրևանու կանաչ

տերևներով եւ կապույտ ծաղիկներով շրջապատված մի պատուհան, որտեղից ժպտում է աշակերտներին գեղեցկուհի Սերվինազը: Եվ կինը, որ ծնված էր երջանիկ լինելու, կրում է խորտակված պատրանքների տառապանքը՝ զգալով «իր հրապույրներուն պակսիլը»:

Իրականությունը դիմակահանդես է եւ Աննիկը («Կարծեմ թե») ընդունակ է նոր դիմակներ դնելու՝ վարպետությամբ քողարկելով իր էությունը: Եթե կյանքը դիմակախաղ է, ուրեմն ճշմարիտը երջանկության մեկ վայրկյանն է («Երջանիկ մահ»): Կյանքի ու մահվան, սիրո եւ երջանկության հավերժական խնդիրը շոշափող լավագույն նորավեպերից է սա, որի գեղագիտական նպատակադրումը լիարժեք ապրելու մարդկային ձգտման եւ կնոջ ներաշխարհի ու հոգեբանության բացահայտումն է: Ուրեմն արժե՞ մեկ օր ապրելու համար զրկվել երջանկության հաճույքից: Այսպես է դատում նովելի հերոսուհին եւ չանսալով բժշկի խորհրդին՝ տրվում է պարահանդեսի շրջապտույտին ու մահանում սիրած երիտասարդի գրկում՝ մահվան մեջ զգալով գերագույն երջանկությունը:

Իր նամակներից մեկում Զոհրապը գրում է. «Ես երիտասարդ կինը հառաջաբանի մը նմանեցուցած եմ, գրքի մը առաջին գլխին, որ հետաքրքրությունը կարթնացնե, բայց չի գոհացներ... Հասուն կինը հատորն է ամբողջ, հոծ ու ստվար, լեցուն հազար դրվագներով, որոնց ծայրը միշտ արցունքի կաթիլ մը կը նշմարվի: Իր միսերուն ամեն մի ծալքին, իր մարմնին վերա ծանրացող թովչության ու խոնջենքին մեջ՝ կսկիծներու եւ վայելքներու դրոշմը կա, որ հին մեհյաններու վրա տեսնվածին պես՝ անհատնում պաշտամունքներու ու երկրպագություններու ամենեն նվիրական վավերագիրն է»[11]:

Պատկերելով կնոջ սոցիալական կենսագրության սյուժեն՝ Զոհրապը գրեթե բոլոր նովելներում նրան անջատում է կին - ամուսին հարաբերությունից եւ պատճառի ու հետեւանքի մեջ շեշտում կնոջ՝ որպես կենսաբանական էակի ներհատուկ բնազդի արթնացումը: Այստեղ է ահա թաքուն այն գրգիռը, որին Տիգրանուհին ակամա պիտի տեղի տար, քանզի բնությունը հզոր է կամքի դիմադրությունից: Տանտիրոջ որդու գայթանքները աստիճանաբար վերաճում են հաճույքի: Բնության եւ բարոյականության բախումն անխուսափելի է, եւ վաղ թե ուշ Տիգրանուհին պիտի հայտնվեր այդ բախման հանգույցում եւ առմիշտ վերջակետ դներ երջանկության իր երազանքին, քանզի հասարակությունը տեղ չունի անհատի երջանկության համար («Փոստալ»):

«Փոստալի»-ի գլխավոր կերպարները՝ Տիգրանուհին, Սուրբիկ Հանըմը և Հաճի Տյուրիկը, բոլորն էլ տիպականացված են, սակայն այդ կերպարներից առավել շոշափելի որոշակելիությամբ կերտված է Սուրբիկ Հանըմը: Զոհրապի մի

շարք կերպարներն այնքան տիպական են, այնքան բնորոշ, հաճախ այնքան բազմակողմանի, որ թվում է, թե կերտված են ավելի մեծ կտավի մեջ: Սուրբիկը բազմահատված կերպար է, բարդ նկարագիր: Շահագործելը, կեղծիքը, խաբելը, ներքնախավերի վրա որպես շահագործման առարկայի նայելը, բուրժուական հոգեբանության հատուկ այս երևույթն այնքան են արմատացած այդ կնոջ մեջ, այնքան սովորական դարձած, որ սեփական իրավունքների ոտնահարում պիտի նկատվեր հակառակը մտածել տալը: Այդ է պատճառը, որ Սուրբիկի կեղծ զայրույթը Տիգրանուհու նկատմամբ հետզհետե վերածվում է «անկեղծ» զայրույթի:

Նկարագրելով կողք-կողքի Տիգրանուհուն և Սուրբիկին՝ հեղինակը մղում է ընթերցողին համեմատելու դրանց և համոզվելու, որ աշխատավոր ժողովրդի դուստրը մարդկային շատ ավելի բարձր արժանիքներ ունի, քան բարեգործի, բարեպաշտության և բարոյականության եռաշերտ դիմակի տակ թաքնված Սուրբիկը: Սուրբիկը և Տիգրանուհին հակադրություններ են, ո՛չ միայն իրենց սոցիալական դրությամբ, նրանք նկարագրի հակոտնյա բևեռներ են նաև իրենց մարդկային արժանիքներով: Առաջինը կեղծիքի, անբարոյականության, գիշատիչի հատկությունների մարմնացումն է, իսկ երկրորդը՝ մանկական միամտության, բարոյական մաքրության, մայրական բյուրեղյա ջինջ ու ջերմ զգացումների:

Կորսված կյանքի նույնպիսի մի ճակատագիր է վիճակվում «Այրին» նովելի հերոսուհուն: Տակավին չճաշակած կյանքի հաճույքը՝ Զարդարը պիտի երազեր վերադարձի կարոտը, իր մեջ զգար կնոջ զգացողությունների վայելքը, որ, ավա՜ղ, այդպես էլ մնաց անկատար: Զարդարի կերպարով հեղինակը ընդհանրացված գծերով և մեծ հուզականությամբ ներկայացրել է բացարձակապես իրավազուրկ, «իր մշտնջենապես կրավորական դերին» մեջ, «գանգատվելու անգամ զորություն» չունեցող գյուղացի կնոջ կյանքը՝ կազմված չարքաշ աշխատանքից, զրկանքներից և արցունքից: Նա ստիպված է սիրել իր համար «սահմանված ամուսինը», որի հետ ամուսնությունից հետո էլ, մտերմությունից զուրկ է «միևնույն հարկին տակ բնակող բազմաթիվ ազգականներու աններող նայվածքին տակ», ապա ստիպված է համակերպվել կամավոր այրիության: Գիտեր, որ ամուսինը չէր գալու, բայց շարունակում էր կարոտով սպասել, հույսերը տարիների հետ ջլատվում էին, արցունքը ցամաքում էր, բայց դեռ սպասում էր: Նրա ծնկները մաշել են գյուղի մատուռի սալահատակը, բայց չի դադարում աղոթելուց՝ «հանդիմանության պես» աղոթքներով, որոնց մեջ իր երիտասարդ կյանքի ողջակիզման, իր սիրո մոխրացման, իր անմիտ զոհաբերության պատասխանատուն է որոնում: Միայն ինքը չէր դժբախտ, բազմաթիվ «հեգ, աղեբեկ ու կորաքամակ

օրինակները կային իր առջև, որոնք ստվերներու պես անխոս՝ իր շուրջը կը դառնային, և Զարդար Էրիկ կնկան ուրիշ տեսակը չէր երևակայած երբեք»։

Հոգու առեղծվածները վերլուծող արվեստագետը շարունակում է սիրո թեմայի մեջ քննել կնոջ երջանկության խնդիրը։ Հոգեբանական փշրվածքի դառն հուշերով Պոլիս եկավ Աշխենը («Թեֆարիկ»)։ Երիտասարդի հանդեպ արթնացած սիրո զգացումը երջանկության վերադարձ էր հուշում նրան եւ նվիրումի անսահման ձգտում՝ կանացի հրապույրներով ու օծանելիքի բույրով, հաճույք վայելելու ներքին մղումով։ Բայց կանացի նրա նրբազգացողությունը հանդիպում է արդեն ձանձրացած երիտասարդի անխոհեմ կոպտությանն ու վանող արհամարհանքին։ Հոգեկան փշրվածքն անբուժելի է, եւ կործանումն՝ անխուսափելի։ Ինչու՞, ինչի՞ համար, եւ ի՞նչ արժեր ճակատագրի այդ քմահաճ խաղը։ Այստեղ է նովելի փիլիսոփայական խոհը. «Ու կը խորհեմ, որ կյանքը լեցուն է աղետներով. իրար չհասկանալե առաջ եկած ցավեր, որոնք փոխադարձ չըլլալուն համար, կը վատնվին ու խղճի տառապանքներով լեցուն հիշատակներ կը թողուն միայն»[12]։ Զոհրապն ընտրում է լարված եւ բարդ հոգեվիճակներ, իր հերոսներին դնում է ծայրաստիճան դժվարին կացության մեջ, ենթարկում է ճակատագրական փորձության։ Այդ բոլորի պատկերման մեջ շատ հաճախ հանդես են գալիս հերոսների ներաշխարհի թաքուն խորհրդավոր շերտերը, ենթագիտակցական մղումները, որոնք էլ պայմանավորում են դեպքերի զարգացման անսպասելի եւ անսովոր, հիրավի «նովելային» վախճանը՝ «փոքր տարածության» վրա ներկայացնելով կնոջ հոգեբանական առեղծվածների մի բարդ շղթա, որ գրեթե անվերծանելի է։

«Անհավատարիմը» հոգեբանական շատ խոր երկ է և միանգամայն ինքնատիպ, իբրև կնոջ հոգեբանության դրսևորում։ Նորավեպի թեման և գաղափարական բովանդակությունը շատ սովորական է՝ կնոջ դժգոհությունը անհամապատասխան ամուսնուց և հոգեկան կապի անհրաժեշտության պահանջ։ Այս՝ գրականության մեջ բազմիցս կրկնված թեմայից, հեղինակը զարգացրել է հոգեբանական վերին աստիճանի ինքնատիպ մի երկ, որ նորություն պետք է համարել մեր գրականության համար։ Նորավեպի հերոսուհին իր հոգին հաճույքով տվել է իր սիրածին, բայց մարմինը մերժում է։ Մարմնով նա պատկանում է իր ամուսնուն, բայց հոգով ուրիշին։ Նկարագրելով հոգու անհավատարմությունը՝ հեղինակը կատարել է հոգեբանական մի փորձ։ Նորավեպի հերոսուհին «անհավատարմություն» է գործում իր ամուսնու դեմ և վերջինիս «օգնությամբ»։ Ամուսնու խոշտանգումները նրան ստիպում են ցավից բարձրաձայն լալ, բայց միևնույն ժամանակ նա իրեն երջանիկ է զգում, զգում է իրեն միավորված սիրածի հետ։ Հեղինակը գեղարվեստորեն պատճառաբանել է իր հերոսուհու այդ

ապրումները՝ նկարագրելով խոշտանգումը այն պահին, երբ նա հոգեբանորեն նախապատրաստված էր դրա համար:

Սերը փոթորկել է նորավեպի հերոսուհու հոգին, ամեն ինչ խառնվել, շփոթվել է, կյանքի մեջ առաջին անգամն է, որ նա այդպիսի ուժով ապրում է բնական մեծ զգացումը, նա գինով է, վերացել է աշխարհից, այդ պատճառով էլ մարդիկ ու իրերը շփոթվում են, աննյութանում, ցնորքի ու երազի վերածվում: Ահա այս վերացած, ցնորքով ու երազով լեցուն տրամադրության մեջ, նա իրեն զգում է սիրածի գրկում, դրա համար էլ ամուսնու խոշտանգումները ցավի հետ միասին նրան պատճառում են «գերագույն վայելքի սարսուռը», որը և նրան ուժ է տալիս ընդվզելու: «Անհավատարիմը» նորավեպի հերոսուհու հոգեկան այդ «ընդվզումը», իհարկե, խղճուկ, ստրկական ընդվզում է, թույլ փոխհատուցում: Հեղինակը, չնայած իր նկարագրած ամուսնական հարաբերությունների անհեթեթության բոլոր փաստերին, որևէ արմատական միջոց չի առաջարկում: Ոչ մի նորավեպի մեջ նա ցույց չի տվել ապահարզանի հնարավորության միտքն անգամ:

«Մագղաթինե» նովելի հերոսուհուն Գրիգոր Զոհրապը անուն չի տվել: Նա ծնողներ չուներ, ուներ միայն տատ, փոքր քույր և եղբայր: Ինքը տառաճանաչ չէր, բայց գիտելիքը կարևորելով քրոջն ու եղբորը դպրոց էր տվել: Իր այդ հարազատներին պահում էր՝ վաճառելով իր մարմինը: Հասարակությունը անբարոյական է համարում նրան: Սակայն նա մասնակցում էր բոլոր եկեղեցական ծեսերին, պատարագներին: Պատարագի վերջին հաղորդությանը չէր ստանում, որովհետև տուն հասնելուց հետո մեղք պիտի գործեր: Նրա մահից հետո բացի հարազատներից ոչ ոք չհիշեց նրան: Նրա արարքները քարկոծվում էին ու չէին ընդունվում:

Հոգեբան գրողն ընդամենը երկու նախադասությամբ անսպասելի լուծում է գործողությունը: Սերն ի վերջո հաղթում է, Պերճուհին Սահակի մահից հետո ծանր դրամա է ապրում, և այլևս աշխարհն ու կյանքի հաճույքները նրա համար կորցնում են իրենց հմայքը: Որքան անմեկնելի է կնոջ հոգու առեղծվածը, նույնքան անպատճառ է Պերճուհու ապաշխարության գաղտնիքը, որ հասկանալի է միայն իրեն («Այինկա»):

«Խարիսխը» նորավեպում հեղինակը վերանայում է իր արտառոց կարծիքը կանանց վերաբերյալ: Նա մի ժամանակ այն կարծիքին էր, որ կինը միայն վայելող է, իսկ երբ ավելի լավ ճանաչեց իրականությունը, որ կինը, նույնիսկ վերնախավերում, միայն վայելող չէ, այլև շատ ավելի հաճախ՝ զոհ: Սոֆիկը, այդ նորավեպի հերոսուհին, երբեմնի ունևոր, ապա սնանկացած վաճառականի աղջիկը, ամուսնացել է հարուստ մարդու հետ: Այս հանգամանքը, որ նա նախախնամությունից տրված երջանկություն է

համարում, իրոք նրա դժբախտության պատճառն է: Իր սեփական տանը նա իրեն զգում է օտարականի պես: Սակայն «Երջանիկ մահը» նորավեպի հերոսուհու պես, նա իր վիշտը չի խլացնում պարահանդեսների աղմուկով, այլ դառնում է «ջերմ» հավատացյալ: Բայց հավա՞տք է դա արդյոք: Հեղինակը ցույց է տալիս, որ հավատքը ոչ միայն նվազել էր, այլև նրա մեջ արտացոլվել էր դարի էությունը՝ վաճառականական ոգին: Սոֆիկի հավատքը թելադրված էր հաշիվներով, կապված է աշխարհիկ հանգամանքների հետ: Սոֆիկի հոգեկան դրամայի հանգույցը սկսվում է շատ պարզ շարժառիթներով: Իր հոր աղքատացած տանը, երբ իրենց աղքատիկ կարասներին նայելով հիշում էր ճոխ ու զարդարուն սենյակները ու երազում էր, որ մի օր կիրականանան իր իղձերը ու խորհում էր, որ այս ամենը վերադարձնել, իրականացնել կարող է միայն Աստված: Ահա հաշվապահական հավատքի սկիզբը: Ցավերի ու անեծքների աստվածը գործում է նաև Սոֆիկի դեմ: Շատ ու շատ կորուստներ է տեսել Սոֆիկը. չորս որդիներից երկուսը մեռել էին, իսկ ամուսնու հարստությունից հիմնահատակ փչացման հիշատակն էր մնացել միայն: Սոֆիկ հանըմի լուռ ցավը ավարտվում է ինքնասպանությամբ՝ խարիսխ համարած եկեղեցում:

Զաբուղոնը գող էր, սակայն մեծ սրտի տեր ու ազնիվ մարդ էր, ով մտածում էր անվերջ սիրո մասին («Զաբուղոն»): Վասիլիկը՝ Զաբուղոնի սիրած աղջիկը՝ լվացարարուհու աղջիկը, արհամարհոտ դիցուհու ձևեր էր բանեցնում: Հեղինակը բացահայտում է, որ Վասիլիկը ցուցամոլ էակ է, նման այն դերասաններին, որոնք իրենց սեփական կյանքը չունեն և ուրիշների համար են միայն ապրում. նրանց նմաններին հանդիսատեսներ են պետք, և կյանքը անհրապույր է նրանց համար, թե դիտողները պակաս են: Այսպես, կարող ենք ասել, որ Վասիլիկը փառասեր ու եսասեր անձնավորություն էր:

Ամուսնությունը երջանկություն չի բերել Մաքրիկին («Վերադարձը»), եւ նա տարիների ընդհատումից հետո նորից հանդիպում է սիրած երիտասարդին եւ վերապրում երջանիկ օրերի ռոմանտիկ հուշերի ափսոսանքը՝ առաջին սիրո հեքիաթը ավարտելով անջատումի անգիտակից անփութությամբ: Կյանքը տարերքի ներքին հոսանքներ ուներ՝ հակասական և իրարամերժ, որ հաճախ կարող է նաև սենտիմենտալ զգացողությունները զոհաբերել վայելքի ինքնագոհ կացությանը: Այս է, որ չկռահեց երիտասարդը, այն, ինչ պիտի զգար Մաքրիկի կանացի բնազդը, թե կյանքում ամեն բան իր լրումն ունի եւ սպառումը, ու սերն անգամ կարող է հոգնել անհագ վայելքից: Կատարվել է շեղումը, եւ նրանց մնում է կարոտով ու զղջումով հիշել իրենց անցյալը: Հոգեբանական հանգույցների լուծումը կրկնություն կլիներ, եթե նույնարժեք լինեին մարդկային անհատականության բանաձեւերը: Յուրաքանչյուր կին

երջանկության է ձգտում, բայց կյանքն ապրում է յուրովի՝ ըստ իր կենցաղավարության ու հոգեզգացական բնույթի: Այս զուգահեռի վրա են դիտված կինը «Պարահանդեսին վաղորդայնը», «Սառա», «Կարծեմ թե», «Փոթորիկը» նորավեպերում: Շատ դեպքերում Զոհրապը միախառնում է իրականն ու երազայինը, երկրայինն ու պատրանքայինը, պատկերում է կյանքն իբրև մի անիմաստ խաղ, հավերժական շրջապտույտ:

Եզրակացություն

Մի ամբողջ տիեզերք է Զոհրապի պատկերած կանացիական աշխարհը: Եվ այդ աշխարհն ունի իր փիլիսոփայությունը՝ անհատի եւ հասարակության, սիրո եւ երջանկության, կյանքի ու մահվան գոյաբանական ընթերցումներով և հոգեբանական լուծումներով: Դժվար է ընդգրկել ամբողջը, առավել ևս՝ բացահայտել բնագրային խտացված էջերի գեղարվեստական ու իմացաբանական արժեքները:

Զոհրապն առանձին ուշադրություն է դարձնում սիրո խնդրին: Դա միանգամայն բնական է. չէ՞ որ սիրո մեջ ավելի վառ են դրսևորվում մարդու բուն հատկանիշները: Սերը, ըստ Զոհրապի, այնպիսի բնական, անաղարտ զգացմունք է, որ չի ապականվում: Սերը միևնույն ժամանակ ամենակարող է. նա մարդուն ընդունակ է դարձնում հերոսական անձնազոհության, նա կարող է, ըստ հեղինակի, մերձեցնել նույնիսկ իրարամերժ գաղափարներով սնված անհատներին: Զոհրապի նորավեպերում ոչ մի զույգի սերը չի պսակվում երջանկությամբ, սիրո նրա գրեթե բոլոր պատմությունները ավարտվում են կա՛մ մահով, կա՛մ կապերի խզումով, բաժանումով:

Զոհրապի նովելներից եւ ոչ մեկում չենք հանդիպի կնոջ ազատության, նրա հասարակական դերի, սեռերի իրավահավասարության գաղափարին: Գրողը կնոջը դիտում է որպես կենսաբանական էակ, որի վարքը պայմանավորված է կենսաբանական պատճառներով եւ վերլուծում է նրա հոգեբանական շարժումները:

Արտահայտչական դերը, որը Զոհրապը վերապահում է կնոջը, հարմարավետության մթնոլորտի հաստատումն է ընտանիքում, զգացմունքների ու հույզերի աշխարհում, հոգածությունն ու խնամակալությունն է ընտանիքի անդամների հանդեպ, հոգեբանական հավասարակշռությունն ամուսնու եւ երեխաների միջև հարաբերություններում: Այսինքն՝ տնային տնտեսուհու մենաշնորհը:

Զոհրապի նորավեպերի ուսուցման ժամերին ավելի նպատակահարմար է քննարկման ու բանավեճի, համեմատության ու դատավարության մեթոդներին ու ձևերին դիմելը: Աշակերտը նորավեպի հերոսներին փորձում է բերել իր ժամանակներ, գտնել իր ծանոթ միջավայրում՝ շրջապատում, ֆիլմերում, փորձում է արդարացնել կամ մեղադրել՝ տվյալ ժամանակին համահունչ, վեր հանել թերություններն ու արատները, լուծումներ գտնել ու դրական ելքեր առաջարկել այսօրվա լույսի տակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գրիգոր Զոհրապ. Նովելներ, Երևան, 1987
2. Գրիգոր Զոհրապ. Երկեր, Հ.Գ, Երևան, 2002
3. Գրիգոր Զոհրապ. Էջեր ուղևորի մը օրեգրեն